https://doi.org/10.46991/S&L/2020.87.032

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Արթուր Վարդանյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Կոոպերատիվների դասակարգումը պայմանավորված է ժամանակակից աշխարհում դրանց բազմազանությամբ: Վիճակագրական տվյալները հավաստում են, որ գոյություն ունեն կոոպերատիվների առնվազն 130 տեսակներ և ենթատեսակներ[1]:

Կոոպերատիվների տարբեր տեսակների մեջ առանձնակի տեղ են գրավում գյուղատնտեսական կոոպերատիվները: Դրանց առաջացումը և զարգացումը աշխարհի բոլոր երկրներում ունեն ընդհանուր պատճառներ և հատկանիշներ. առաջին և հիմնական պատճառը մանր տնտեսվարողների և շուկայի միջև կապի անհրաժեշտությունն էր, երկրորդ՝գյուղատնտնեսական կոոպերացիան ստեղծման պահից ստացել է վարկային արտոնություններ, ինչպես նաև՝ աջակցություն արտադրական հիմնարկների կողմից, երրորդ՝ գյուղատնտեսական կոոպերատիվները ստեղծվել են ոչ թե գյուղացիների, այլ պետությունների նախաձեռնությամբ. «Գյուղանտնտեսական կոոպերատիվների ստեղծումը եղել է առանձին անձանց գաղափար՝ որպես սոցիալ-տնտեսական կենսունակ կառույց: Այն հիմնվել է կապիտալիզմի շրջանում և դարձել տնտեսական հզոր կառույց: Կոոպերատիվները ունեցել են իրենց հոգևոր հայրերը»[2]: Գյուղատնտեսական կոոպերացիան զգալիորեն բարձրացնում է գյուղացիական տնտեսությունների արտադրունակությունը և թույլ է տալիս նրան մրցակցելու խոշոր մասնավոր տնտեսությունների հետ: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ թյուր է այն տեսակետը, թե կոոպերատիվները սոցիալիստական կարգերի անցնելու հող են նախապատրաստում: Դա է ապացուցում զարգացած կապիտալիստական երկրների կոոպերացիայի փորձը: Այսպես՝ Եվրամիության երկրներում գյուղատնտեսական արտադրանքի և պարենային շուկաներում կոոպերատիվների բաժինը կազմում է 50%, Ճապոնիայում՝ 40%[3]: ԱՄՆ-ում գյուղատնտեսական կոոպերատիվների շուկայաբաժինը կազմում է գյուղատնտեսական մթերքների վերամշակման և իրացման շուկայի մոտ 28 տոկոսը և ներդրանքների մատակարարման շուկայի 26 տոկոսը[4]:

Գյուղատնտեսական կոոպերատիվների տեսակները ևս բազմազան են: Հիմք ընդունելով տարբեր հատկանիշներ՝ գյուղատնտեսական կոոպերատիվները կարելի է դասակարգել մի քանի մեծ խմբերի: Ըստ կոոպերատիվների համակարգում իրենց զբաղեցրած դիրքի՝ դրանք լինում են առաջնային, երկրորդային, երրորդային

---

[1]Տե՛ս **К. И. Вахитов**, История потребительской кооперации России, М., 2008, էջ 32:
[2]Տե՛ս **Туган-Барановский М. И.,** Социальные основы кооперации, М.,1989, էջ 46:
[3]Տե՛ս Селькохозяйственные потребительские заготовительные и снабженческо-сетовые кооперативы. Бухгалтерский учет. Учебное пособие. М., 2007, էջ 21:
[4]Տե՛ս **Վ. Ուռուտյան, Ս. Ավետիսյան,** Հայաստանի Հանրապետությունում գործող կոոպերատիվների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրություն, Երևան, 2014, էջ 5:

և այլն[1]: Առաջնային կոոպերատիվները անձանց և կապիտալի սկզբնական միավորումներն են, որոնք համարվում են կոոպերատիվների համակարգի առաջնային և հիմնական օղակը: Երկրորդայինը գյուղատնտեսական կոոպերատիվների միություններն են ըստ համապատասխան գործունեության վայրի կամ մասնագիտացման, որոնք անվանվում են հովանավոր կոոպերատիվներ (umbrela cooperatives): Երրորդայինը տվյալ պետության տարածքում ստեղծված կոոպերատիվների միություններն են, որոնք ստեղծվում են կոոպերատիվների համագործակցությունը ավելի արդյունավետ դարձնելու, դրանց շահերը պաշտպանելու և պետական մարմիններին ներկայացնելու համար: Գոյություն ունեն նաև կոոպերատիվների միջազգային միություններ, ինչպիսին Կոոպերատիվների միջազգային դաշինքն է: Դաշինքն աշխարհում ոչ կառավարական ամենամեծ կազմակերպությունն է, որին անդամկցում են ավելի քան 250 կոոպերատիվներ աշխարհի տարբեր երկրներից, իսկ մարդկանց թիվը հասնում է 800 միլիոնի: Դաշինքը ապահովում է իր անդամների միջև փորձի փոխանակումը, օժանդակում է կոոպերատիվների զարգացմանը[2]:

Կոոպերատիվների դասակարգումը կատարվում է նաև ըստ դրանց գործունեության ոլորտի: Գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության հիմնական ուղղությունները հետևյալն են՝ ներդրանքների (սերմեր, բուժանյութեր, սարքավորումներ) մատակարարում, գյուղմթերքի հավաքում և մշակում (պահեստավորում սառնարանային տնտեսություններում), արտադրված գյուղմթերքի շուկայահանում և այլն: Կախված գործունեության բնույթից՝ գյուղատնտեսական կոոպերատիվները կարելի է դասակարգել 5 հիմնական տեսակների՝ արտադրական, առևտրային, սպառողական, ծառայությունների մատուցման և վերամշակող:

Գոյություն ունի գյուղատնտեսական կոոպերատիվների դասակարգման սոցիալական տարբերակը, այսինքն՝ ըստ մասնակիցների մասնագիտության, ինչպես օրինակ՝ ձկնորսական կոոպերատիվները, որսորդական կոոպերատիվները և այլն:

Ինչպես ԱՊՀ երկրների մեծ մասում (բացառությամբ Թուրքմենստանի, Ուկրաինայի և Բելառուսի), այնպես էլ Հայաստանում կոոպերատիվները, այդ թվում և գյուղատնտեսական կոոպերատիվները կարող են ստեղծվել երկու ձևով՝ գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվներ և սպառողական կոոպերատիվներ: Այդ մասին է վկայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[3] 51-րդ հոդվածի 3-րդ մասը, որն ունի հետևյալ բովանդակությունը. «Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ»: Այսինքն՝ կոոպերատիվների դասակարգումը կատարվում է ըստ ըստ դրանց գործունեության նպատակի և ոչ թե գործունեության բնույթի: Թեպետ օրենսգրքով նշված չեն առևտրային և սպառողական կոոպերատիվների տեսակները, այդուհանդերձ ոչ առևտրային կոոպերատիվները ստեղծվում են սպառողական կոոպերատիվների ձևով, այդ մասին է վկայում «Սպառողական կոոպերացիայի մասին» օրենքի[4] 1-ին հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում սպառողական կոոպերատիվը 5-ից ոչ պակաս անդամների (մասնակիցների) կարիքներն ապրանքներով և ծառայություններով բավարարելու, նրանց շահերը ներկայացնելու և դրանք պաշտպանելու նպատակով կամավոր հիմունքներով ձևավորված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է»:

---

[1] Տե՛ս Zvi Lerman and David Sedik Cooperatives in the CIS and Georgia: Overview of Legislation. FAO Regional Office for Europe and Central Asia Policy Studies on Rural Transition No. 2014-2, էջ 5:

[2] Տե՛ս **Крашенников А.И.**, Международный альянс.-М., 1980, էջ 36:

[3] Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

[4] Տե՛ս ՀՀԳԽՏ 1993/24:

Հարկ է նկատել, որ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքը չի նշում՝ ինչ ձևով կարող են ստեղծվել գյուղատնտեսական կոոպերատիվները: Եվ քանի որ չի նշել, թե վերջիններս հետապնդու՞մ են շահույթ ստանալու նպատակ, թե՞ ոչ, հետևաբար գյուղատնտեսական կոոպերատիվները կարող են ստեղծվել և՛ որպես առևտրային կազմակերպություններ՝ գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվներ, և՛ որպես գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ: Նշված անորոշությունը վերացնելու համար առաջարկում ենք Օրենքը լրացնել հետևյալ խմբագրությամբ հոդվածով.

«Գյուղատնտեսական կոոպերատիվները կարող են ստեղծվել որպես առևտրային և ոչ առևտրային (սպառողական) կոոպերատիվներ: Գյուղատնտեսական կոոպերատիվը համարվում է առևտրային, եթե օրենքով կամ կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Ոչ առևտրային կոոպերատիվների անվանումը պետք է պարունակի «սպառողական կոոպերատիվ» բառակապակցությունը»:

Առաջարկում ենք օրենսդրորեն ամրագրել նաև առևտրային և սպառողական կոոպերատիվների սահմանումը: Առևտրային կոոպերատիվների համար առաջարկում ենք հետևյալ սահմանումը.

«Առևտրային կոոպերատիվները գյուղատնտեսության ոլորտում համատեղ արտադրական կամ այլ գործունեություն իրականացնելու համար, շահույթ ստանալու նպատակ հետապնդող, անդամության հիման վրա կամովին միավորված քաղաքացիների միություն է, որի անդամները, անձնական, աշխատանքային կամ այլ մասնակցությունից զատ, միավորում են իրենց փայավճարները»:

Իսկ սպառողական կոոպերատիվների համար առաջարկում ենք օրենսդրորեն ամրագրել հետևյալ սահմանումը.

«Սպառողական կոոպերատիվները անդամների և նրանց փայերի կամավոր միավորում են, որոնք ստեղծվում են անդամներին գյուղատնտեսական արտադրանքով, աշխատանքներով և ծառայություններով ապահովելու համար: Սպառողական կոոպերատիվը կարող է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Սպառողական կոոպերատիվների շահույթը անդամների միջև չի բաշխվում»:

Հարկ է նշել, որ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող որոշ երկրներում գյուղատնտեսական կոոպրատիվների այսպիսի տարանջատումն ընդունելի չէ, և դրանք ստեղծվում են որպես գյուղատնտեսական ծառայություններ մատուցող կոոպերատիվներ[1]: Մինչդեռ, մեր կարծիքով, նման մոտեցումը ճիշտ չէ, քանի որ արտադրական և սպառողական կոոպերատիվները ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները, և դրանք նույնացնելը ճիշտ չէ: Արտադրական և սպառողական կոոպերատիվների հիմնական տարբերություններից մեկն էլ այն է, որ արտադրական կոոպերատիվներում անդամների աշխատանքային մասնակցությունը պարտադիր է: Արտադրական կոոպերատիվի անդամները միավորում են իրենց կապիտալը և աշխատուժը՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրելու, այն վաճառելու և շահույթ ստանալու նպատակով, իսկ սպառողական կոոպերատիվի անդամները միավորվում են՝ ավելի էժան գնով համապատասխան տեխնիկա կամ այլ անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու նպատակով: Հենց աշխատանքային մասնակցության պարտադիրությունն է նաև պատճառը, որ իրավաբանական անձինք, որպես կանոն, չեն կարող անդամակցել արտադրական կոոպերատիվներին[2]: Սպառողական կոոպերատիվներում անդամների աշխատանքային մասնակցությունը պարտադիր չէ:

---

[1] Տե՛ս Zvi Lerman and David Sedik Cooperatives in the CIS and Georgia: Overview of Legislation. FAO Regional Office for Europe and Central Asia Policy Studies on Rural Transition No. 2014-2, էջ 5:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 6:

Գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվները իրավաբանական անձանց և կոոպերատիվների յուրահատուկ տեսակ են: Դրանց ուսումնասիրությունը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ առումով.

1. Սպառողական կոոպերատիվներում ավելի են արտահայտված մարդկանց տնտեսական և սոցիալական հետաքրքրությունները,

2. Սպառողական կոոպերատիվը ոչ այնքան պետության կողմից նախատեսված ինստիտուտ է, որքան ժողովրդի կամահայտնության արդյունք,

3. Սպառողական կոոպերատիվը լուծում է ոչ միայն ներկոոպերատիվ խնդիրներ, այլև իրականացնում է բնակչության սոցիալական պաշտպանությունը՝ կատարելով պետության գործառույթը[1]:

Գյուղատնտեսակն սպառողական կոոպերատիվը ոչ առևտրային կազմակերպություն է: Որոշ հեղինակներ կարծում են, որ սպառողական կոոպերատիվները կարող են իրենց անդամների նյութական և այլ կարիքները բավարարել միայն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելով, աշխատանքներ կատարելով և շահույթ ստանալով[2]: Բայց պետք է նկատի ունենալ, որ սպառողական կոոպերատիվների հիմնական տարբերությունը առևտրային կազմակերպություններից այն է, որ կոոպերատիվների համար շահույթ ստանալը ոչ թե հիմնական, այլ երկրորդային նպատակ է: Ինչպես փորձը ցույց է տալիս, սպառողական կոոպերատիվները կարող են բավարարել իրենց անդամների պահանջմունքները առանց շահույթ ստանալու կամ նման նպատակ հետապնդելու: Այսպես, գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվի մասնակիցները, ստեղծելով կոոպերատիվ, միավորում են իրենց միջոցները, օրինակ՝ ավելի մատչելի գներով դիզվառելիք ձեռբերելու նպատակով, քանի որ կոոպերատիվը ձեռք է բերում ավելի մեծ քանակությամբ՝ մեծածախ գներով և հանձնում է մասնակիցներին՝ նրանց փայի արժեքին համապատասխան՝առանց շահույթ ստանալու նպատակի:

Սպառողական կոոպերատիվները չեն ստեղծվում շահույթ ստանալու նպատակով, դրանք իրենց հիմնադիրների՝ փայատերերի կարիքները բավարարելու համար են: Սպառողական կոոպերատիվը միակ կազմակերպությունն է, որը լուծում է անդամների տնտեսական և սոցիալական խնդիրները[3]:

ԱՄՆ-ում գյուղատնտեսական կոոպերատիվների տեսակները երեքն են՝ մատակարարող, առևտրային և ծառայություններ մատուցող[4]: Մատակարարող կոոպերատիվները ըստ էության նույն սպառողական կոոպերատիվներն են և ստեղծվում են իրենց անդամներին պարարտանյութով, տեխնիկայով ապահովելու համար:

«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասը սահմանել է գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության հետևյալ ուղղությունները՝

1) գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և իրացման,

2) գյուղատնտեսական մատակարարման,

3) գյուղատնտեսության ոլորտում սպասարկման (ծառայություններ մատուցող),

---

[1]Տե՛ս Гражданское общество в России; Западная парадигма и российкая реальность.К. И. Холодковский, М., 1999, էջ139:

[2]Տե՛ս Институт государства и права Российской академии наук центр цивилицтических исследований: Субъекты гражданского права, Москва, 2000 г., Ответственный редактор доктор юридических наук, профессор Т. Е. Абова , էջ 43:

[3]Տե՛ս Материалы кооперативного форума. Совершенствование кооперативного управления. Белгород,1999, էջ 29:

[4] Տե՛ս http://nationalaglawcenter.org/research-by-topic/cooperatives/The National Agricultural Law Center: Cooperatives, կայքին հղումը՝ 03.03.2020 թ. ժամը 12:25-ի դրությամբ:

4) գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման:

Օրենքը դասակարգել է գյուղատնտեսական կոոպերատիվները ըստ գործունեության ուղղությունների, որոնց կանդրադառնանք առանձին-առանձին:

1. **Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության կոոպերատիվները** այլ կերպ անվանվում են արտադրական կոոպերատիվ (արտել): Օրենքի իմաստով Արտադրական կոոպերատիվները զբաղվում են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ և իրացմամբ, ծառայությունների մատուցմամբ, գյուղատնտեսական արտադրանքի պահպանմամբ, փոխադրումով, փաթեթավորմամբ, գովազդով և արտադրությունից մինչև սպառում արժեքային շղթայի փուլերի այլ գործառույթներով: Հարկ է նկատել, որ Օրենքը չի մանրամասնում գյուղատնտեսական արտադրանք հասկացությունը: Օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գյուղատնտեսական արտադրանքը գյուղատնտեսական գործունեության արդյունքում ստացված արտադրանքն է: Գյուղատնտեսական արտադրանք հակացությունը և սպառիչ ցանկը սահմանված են «Հարկային օրենսգրքով»[1]:

Գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվները զբաղվում են գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ և վաճառքով[2]: Արտադրական կոոպերատիվները միևնույն ժամանակ աշխատանքի և կապիտալի միավորում են: Ներկայումս արտադրական կոոպերատիվները մասնագիտական գրականության մեջ բաժանում են երեք խմբերի.

1. «մաքուր» տիպի կոոպերատիվներ, որտեղ յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք, իսկ անդամների միջև շահույթը բաշխվում է նրանց աշխատանքային մասնակցությանը համապատասխան,

2. կոոպերատիվներ, որոնց բնորոշ են բաժնետիրական ընկերությունների որոշ հատկանիշներ, այստեղ շահույթը անդամների միջև բաշխվում է ոչ թե նրանց աշխատանքային մասնակցությանը համապատասխան, այլ փայերին համապատասխան,

3. խառը տիպի կոոպերատիվներ, որոնք ունեն և՛ առաջին, և՛ երկրորդ տիպի կոոպերատիվներին բնորոշ հատկանիշներ[3]:

Իսրայելում արտադրական կոոպերատիվների յուրօրինակ ձև են կիբուցները, որոնք մեծ թիվ են կազմում: Դրանք զբաղվում են գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ: Արտադրական կոոպերատիվները ևս դասակարգվում են ըստ իրենց գործունեության ոլորտի, արտադրվող մթերքի տեսակի, օրինակ՝ հացահատիկային, այգեգործական, մսի, կաթի արտադրությամբ զբաղվող կոոպերատիվներ և այլն[4]:

2. **Գյուղատնտեսական մատակարարման կոոպերատիվները** գործունեություն են իրականացնում հետևյալ բնագավառներում՝ անդամների համար պարարտանյութի, վառելիքի, քսանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների, սերմերի, տնկանյութի, կերի, գյուղատնտեսական տեխնիկայի, պահեստամասերի, գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրության համար այլ ներդրանքների մատակարարում:

Հետևաբար Օրենքը նախատեսել է, որ նրանք պետք է ապրանքներ մատակարարեն միայն անդամներին, այսինքն՝ ենթադրվում է, որ չեն հետապնդում շահույթ ստանալու նպատակ: Եվ ինչպես ցույց է տալիս օտարերկրյա փորձը, մատակարարման կոոպերատիվները սպառողական կոոպերատիվների յուրօրինակ տեսակ են, որոնց հիմնական նպատակը գյուղացիների կողմից գնումներ կատարելու գոր-

---

[1] Տե՛ս ՀՀՊՏ 2010.12.30/69(803).1:

[2] Տե՛ս **Վ. Ուռուտյան, Ս. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 13:

[3] Տե՛ս **Կ. И. Вахитов,** История потребительской кооперации России, М., 2008, էջ 49:

[4] Տե՛ս **Макаренко А. П.**, Теория и история кооперативного движения: Учебное пособие. М., 1999, էջ 85:

ծընթացում խնայողությունների ապահովումն է[1]: Սպառողական կոոպերատիվները որպես մեծածախ գնորդ ձեռք են բերում իրենց անդամների համար անհրաժեշտ ապրանքները (վառելիք, սերմնացու, պարարտանյութ և այլն) ավելի ցածր գնով և տրամադրում են իրենց անդամներին:

3.**Գյուղատնտեսության ոլորտում սպասարկման (ծառայություններ մատուցող) կոոպերատիվները** իրականացնում են գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքներով սպասարկում, բույսերի պաշտպանության, տոհմաբուծական, անասնաբուծության, հողերի մելիորատիվ վիճակի բարելավման, անասնաբուժական, գյուղատնտեսական շինարարության, գյուղական բնակչությանը գիտախորհրդատվական, տեղեկատվական, կենցաղային սպասարկման բնույթի ծառայությունների մատուցում:

Ծառայություններ մատուցելու կոոպերատիվները առաջ են եկել 1930-1940 թվականներին: Ներկայումս դրանք տրամադրում են այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ գյուղատնտեսական վարկերի տրամադրումը, ապահովագրության իրականացումը, ոռոգումը, կեղտաջրերի հեռացումը և այլն: Վերջին տարիներին մասնավորապես ԱՄՆ-ում այս կոոպերատիվների կողմից լայն տարածում են ստացել շուկայահանման (մարկետինգ) գծով խորհրդատվությունն ու աջակցությունը, ֆերմերային տնտեսության կառավարման խորհրդատվությունը և այլ ծառայությունների մատուցումը, որոնք արժեքավոր են գյուղացու համար: Միացյալ Նահանգներում շուրջ 45 մլն մարդ օգտվում է կոոպերատիվների կողմից մատուցվող հաղորդակցության և էլեկտրոնային ծառայություններից[2]:

4.**Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման կոոպերատիվները** զբաղվում են գյուղատնտեսական ապրանքների վերամշակմամբ և (կամ) փաթեթավորմամբ:

Վերամշակող կոոպերատիվների օրինակներ են կարագի և պանրի արտադրությամբ, մրգերի փաթեթավորմամբ և բանջարեղենի պահածոյացմամբ զբաղվող կոոպերատիվները: Սա ևս կոոպերատիվների ուղղահայաց ինտեգրման մի տեսակ է, որի պարագայում գյուղացիները ավելացնում են իրենց արտադրանքի արժեքը՝ ստանալով ավելի մեծ շահույթ:

Թեև Օրենք 5-րդ հոդվածի 1-ին մասում նշված են գյուղատնտեսական կոոպերատիվի վերոգրյալ 4 տեսակները, այդուհանդերձ գյուղատնտեսական կոոպերատիվների տեսակները այսքանով չեն սահմանափակվում: Այդ մասին է վկայում նաև նույն հոդվածի 2-րդ մասը՝ համաձայն որի.

«Կոոպերատիվը, իր կանոնադրությանը համապատասխան, կարող է համատեղել գործունեության առանձին ուղղություններ՝ հանդես գալով որպես գործունեության տարբեր ուղղություններ ունեցող կոոպերատիվ և իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ գործունեություն»:

Նշված կարգավորումից հետևում է, որ կոոպերատիվները կարող են միավորել գործունեության մի քանի ուղղություններ, ինչը բնորոշ է ներկայիս գլոբալացման և դինամիկ շուկայական զարգացման պայմաններին, երբ բազմաթիվ կոոպերատիվներ ձեռք են բերում բազմագործառութային բնույթ, և կոոպերատիվների տարբեր տեսակների սահմանները դժվար է որոշել:

Գյուղատնտեսության ոլորտում յուրահատուկ գործառույթ են իրականացնում վարկային կոոպերատիվները, որոնք ստեղծվել են դեռևս 19-րդ դարի 30-ական թվականներին Շվեդիայում[3]: Աշխատավորների խմբերը օրական փոքր գումարներ էին մուծում, որոնք ուղղվում էին կոոպերատիվների կապիտալի ստեղծմանը, փո-

---

[1]Տե՛ս Селькохозяйственные потребительские заготовительные и снабженческо-сбытовые кооперативы. Бухгалтерский учет. Учебное пособие. М., 2007, էջ 21:
[2]Տե՛ս **Վ. Ուռուտյան, Ս. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 17:
[3]Տե՛ս **Анциферов И. Н.**, Очерки по кооперации. Полтава, 1918, էջ 35:

խարենը ձեռք էին բերում փայի իրավունք: Դրամական միջոցները ուղղվում էին ապրանքներ գնելուն, որպեսզի շուկայականից ցածր գնով վաճառվեր կոոպերատիվի անդամներին: Կոոպերատիվի անդամները իրենց փայից ստանում էին 5% եկամուտ, որը վերցնում էին տարվա վերջում: Կոոպերատիվի յուրաքանչյուր անդամ ուներ միայն մեկ ձայնի իրավունք՝ անկախ իրեն պատկանող փայի արժեքից[1]:

Վարկային կոոպերատիվը ֆինանսատնտեսական բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձ է. այն ստեղծվում է անդամության հիմունքներով և անդամների կողմից փայավճարների միավորման միջոցով՝ իր անդամներին ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրելու, նրանց դրամական միջոցները արժեզրկումից պահպանելու և այլ կարիքներ բավարարելու նպատակով: Վարկային կոոպերատիվի անդամ կարող են լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Վարկային կոոպերատիվները կոոպերատիվների յուրօրինակ տեսակ են, որոնք գործունեություն են իրականացնում ֆինանսական բնագավառում: Որոշ հեղինակներ նշում են, որ վարկային կոոպերատիվները կարող են ստեղծվել միայն սպառողական կոոպերատիվների ձևով և չեն կարող հետապնդել շահույթ ստանալու նպատակ. ի տարբերություն բանկերի և այլ վարկային կազմակերպությունների՝ կոոպերատիվների նպատակը ոչ թե շահույթ ստանալն է, այլ իր անդամներին ֆինանսական օգնություն ցույց տալը և նյութական ապահովվածության բարելավմանը աջակցելը[2]: Բայց մենք համակարծիք չենք այս տեսակետին և գտնում ենք, որ ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում վարկային կոոպերատիվները կարող են ստեղծվել ինչպես ոչ առևտրային, այնպես էլ (գլխավորապես) առևտրային կազմակերպությունների ձևով՝ տրամադրելով վարկեր ինչպես անդամներին, այնպես էլ անդամ չհանդիսացող հաճախորդներին: Այդ մասին է վկայում նաև օտարերկրյա փորձի ուսումնասիրությունը[3]:

Վարկային կոոպերատիվների առավելություններն են՝

1. Կոոպերատիվի անդամները կարող են վարկեր վերցնել ցածր տոկոսադրույքով, որի դիմաց մյուս անդամները ստանում են տոկոսներ՝ իրենց ներդրած ավանդներին համապատասխան,

2. կոոպերատիվի անդամները կապված են ընդհանուր շահերով և համարվում են իրավահավասար անդամներ

3. գործունեությունը վերահսկվում է անդամներ կողմից[4]:

Ներկայումս վարկային կոոպերատիվները բավականին տարածված են. մասնավորապես՝ Ֆրանսիայում գոյություն ունեն մոտավորապես 3 հազար վարկային կոոպերատիվներ, որորնց անդամակցում են ֆերմերները, քաղաքի և գյուղի բնակչությունը, Գերմանիայում դրանց թիվը 3223-ն է՝ ավելի քան 10 մլն անդամներով, Ավստրիայում հաշվվում է 1754 վարկային կոոպերատիվ, Շվեդիայում՝ 390, որոնք էլ իրենց հերթին ունեն 650 մասնաճյուղեր[5]: 2007 թ. փետրվարի 21-ին, ԱՄՆ Գյուղատնտեսության Դեպարտամենտի աջակցությամբ, հիմնադրվեց «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն (ՈՒՎԿ) առևտրային կոոպերատիվը:

Կոոպերատիվների ինքնուրույն տեսակ են նաև ապահովագրական կոոպերատիվները: Դրանք անձանց կամավոր միավորումներ են, որոնք զբաղվում են ապա-

---

[1]Տե՛ս **Говартс Ч.,** Манифест общества рочдельских пионеров. М.,1919, էջ 58:

[2]Տե՛ս **Гутман Г. В., Дилигина О. Б. и др.** Формы кооперативного движения в условиях рыночных реформ. М., 2006,էջ 75:

[3]Տե՛ս **Andrew Poprawa,** DICO Regulation and Legislation of Cooperative Banks and Credit Unions, Prepared for United Nations Expert Group Meeting on Cooperatives April 28-30, 2009 New York, էջ 7:

[4]Տե՛ս http://help.am/coop/images/03_3_Best_Practice_Guidebook.pdf:

[5]Տե՛ս http//www.m-ru/art.php3artid=22046:

հովագրական գործունեությամբ՝ գլխավորապես կյանքի և առողջության ապահովագրությամբ: ԱՄՆ-ի նահանգների մեծ մասի օրենսդրությունը նախատեսում է ապահովագրական կոոպերատիվների ստեղծումը միայն ոչ առևտրային կոոպերատիվների ձևով՝ հնարավորություն տալով զբաղվել միայն անդամների ապահովագրությամբ[1], իսկ Եվրամիության օրենսդրությունը թույլատրում է նաև ապահովագրական կոոպերատիվների ստեղծումը՝ առևտրային կազմակերպությունների ձևով[2]: Մեր իրավական ակտերով, սակայն, անհասկանալի պատճառներով բացառվել է ապահովագրական ընկերությունների ստեղծումը կոոպերատիվների ձևով, ինչի մասին է վկայում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Ընկերությունները և վերաապահովագրական ընկերությունները սույն օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել բացառապես որպես բաժնետիրական ընկերություն կամ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն»: Այս հոդվածից ակնհայտ է, որ մեր իրավական ակտերով բացառվել է ապահովագրական կոոպերատիվների ստեղծումը անհասկանալի պատճառով, այնինչ ներկայումս ապահովագրական կոոպերատիվները մեծ տարածում են ստանում հատկապես գյուղատնտեսության բնագավառում, այդ իսկ պատճառով, մեր կարծիքով, ճիշտ կլինի օրենքի նշված հոդվածը խմբագրել և նախատեսել ապահովագրական ընկերությունների ստեղծումը նաև կոոպերատիվների ձևով՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ներկայումս պետությունը առանձնահատուկ կարևորում է կոոպերացիայի զարգացումը և գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրումը: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ 2019 թ. հոկտեմբերի 1-ից ՀՀ-ում ներդվել է գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագիրը,[3] և մեր կարծիքով՝ ապահովագրական կոոպերատիվների ստեղծումը կարող է դառնալ ծրագրի հաջողության գրավականներից մեկը:

ВИДЫ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ КООПЕРАТИВОВ

Артур Варданян
Аспирант кафедры гражданского права ЕГУ

В статье рассмотрены виды сельскохозяйственных кооперативов, а также изучены критерии их классификации. В статье анализируется опыт развитых европейских стран, а также США в классификации кооперативов. Были проанализированы внутренние правовые нормы кооперативной классификации, и внесены предложения по законодательным изменениям.

[1] Տե՛ս President Obama Considering Insurance Co-Ophttp://www.kktv.com/home/headlines/53362687.html:
[2] Տե՛ս The European Council Directive 73/239 EEC on Coordination of Non Life Insurance Laws, Regulations and Administrative Provisions հոդված 8:
[3] Տե՛ս http://www.rgs.am/arm/404/page.html , կայքին հղումը՝ 03.03.2020թ. ժամը՝ 13:02-ի դրությամբ:

TYPES OF AGRICULTURAL COOPERATIVES

Artur Vardanyan
PhD student at the YSU Chair of Civil Law

The article describes the types of agricultural cooperatives. The classification criteria of cooperatives were studied. The article discusses the experience of developed European countries, as well as the experience of the United States in the classification of cooperatives. The internal legal norms of the cooperative classification were analyzed, and proposals for legislative changes were made.

Բանալի բառեր – գյուղատնտեսական կոոպերատիվ, կոոպերատիվների դասակարգումը, ապահովագրական կոոպերատիվ, վարկային կոոպերատիվ:
Ключевые слова – сельскохозяйственный кооператив, классификация кооперативов, страховой кооператив, кредитный кооператив.
Key words-agricultural cooperative, classification of cooperatives, insurance cooperative, credit cooperative.